որ վրացիք համոզուէին, թէ իրենց դէմ ամբողջ Ռուսաստանը չէ կանգնած, այլ «խղճուկ Հայաստանը», որին մի անգամ արդէն նրանք «յաղթել էին» եւ այժմ էլ կարող էին յաղթել...

Դուրս է գալիս, որ վիրահայ ժողովուրդը անմեղ տեղը քաւութեան նոխազ պէտք է դառնար, որպէսզի վրացիների ռազմական կորովը բարձրանար եւ նրանց զօրքերը, պարտութեան մատնելով ռուս բոլշեւիկներին, յաւերժացնէին Ժորդանիայի եւ իր ընկերների տիրապետութիւնը նախկին փոխարքայի ապարանքում...

Այս տխուր էջով էլ փակւում է վիրահայ ազգային փոքրամասնութեան հանդէպ Ժորդանիայի կառավարութեան որդեգրած քաղաքականութեան պատմութիւնը:

* * *

Մեր աչքի առաջն է այժմ այս քաղաքականութիւնը, որ սկսւում է Վրաստանի անկախութեան սկզբի օրերից եւ որոշ ելեւէջներով շարունակւում մինչեւ նրա վերջին ժամերը: Մեր ձեռքի տակ են նաեւ Վրաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 129–137-րդ յօդուածները, որոնց մէջ շատ գեղեցիկ դաղափարներ կան ձեւակերպուած ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութեան մասին:

Երբ Ժորդանիան այդ յօդուածներից է խօսում, մեր մտքի մէջ իսկոյն ուրուագծւում է նրա հետապնդած գործնական քաղաքականութիւնը մասնաւորապէս վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցում: Եւ, առանց խիստ դատաւոր լինելու, պէտք է ասենք, որ եթէ Ժորդանիան կարող է պարծենալ Վրաստանի Սահմանադրութեան յիշեալ յօդուածներով, նա երբեք չի կարող պարծենալ, թէ ինքը այդ յօդուածների ոգով է ղեկավարուել վիրահայ ազգային փոքրամասնութեան գործերը կարգադրելիս...

* * *

Բոլշեւիկները ռուսական սուինների միջոցով նուաճելով Վրաստանը՝ յանձնեցին վրաց բոլշեւիկների իշխանութեանը: Վերջիններս հիմն ի վեր շրջեցին Ժորդանիայի եւ իր ընկերների հաստատած քաղաքական, ընկերային եւ տնտեսական կարգերը, սակայն, դրեթէ առանց փոփոխութեան որդեգրեցին նրանց հետապնդած քաղաքականութիւնը վիրահայ ազգային փոքրամասնութեան իրաւունքների կամ, աւելի ճիշդն ասած, իրաւազրկութեան խնդրում: Ներկայիս էլ Վրաստանի Խորհրդային վարիչները քայլ առ քայլ վրաց մենշեւիկների եւ ազգայնականների դծած ուղիով ընթանում են այս խնդրում, որքան եւ հրապարակօրէն խարանում են նրանց շովենիստական միտումները:

Փաստերի համար երկար ու բարակ պերպերումներ կատարելու կարիք չկայ:

Ամէնքին յայտնի է, որ բոլշեւիկները ազգային հարցերի արմատական լուծումը դարձրին իրենց քաղաքական ծրագրի գլխաւոր կէտերից մէկը եւ, ինչպէս հոկտեմբերեան յեղաշրջման ժամանակ, նոյնպէս եւ այսօր, թմբկահարում են ամենուրեք, որ այդ հարցը միմիայն Խորհրդային երկրներում է հետեւողականօրէն լուծուած: Զենք ուրանում, որ նրանք այս մարդի մէջ հսկայական նշանակութիւն ունեցող գործերի ձեռնարկեցին նախկին ռուսական կայսրութեան զանազան մասերում: Նրանք ոչ միայն սկզբից եւ եթ առանց այլեւայլութեան ճանաչեցին Լեհաստանի եւ Ֆինլանդիայի կատարեալ անկախութիւնը, այլ եւ, որոշ տատանումներից յետոյ, թոյլ տուին, որ Իստոնիան, Լատվիան եւ Լիտվանիան էլ իրենց անկախ հռչակեն Ռուսաստանից: Դեռ աւելին. բոլշեւիկները կիսանկախ պետական կեանքի կոչեցին այնպիսի ժողովուրդների, որոնք հոկտեմբերեան յեղաշրջումից առաջ ինքնուրոյն պետականութեան կամ պետական ինքնուրոյնութեան մասին գաղափար իսկ չունէին, ինչպէս օրինակ՝ բելոռուսները, թիւրքմէնները, տաճիկները, ղրղզները, բաշկիրները եւն., որոնք կազմակերպուեցին իբրեւ առանձին հանրապետութիւններ կամ ինքնավար շրջաններ Ռուսաստանի Ֆեդերատիւ Հանրապետութեան ծոցում: Բացի սրանից՝ բոլշեւիկներն սկսեցին ազգային գիտակցութիւն հրահրել եւ ազգային ուրոյն մշակոյթի պահանջներ ստեղծել մի շարք յետամնաց ցեղերի մէջ, որոնք նոյնիսկ գիր ու գրականութիւն չունեն: Նրանց համար այբբենարաններ են հնարւում, դպրոցներ բացւում եւ ազգային ինքնուրոյն